«ԳԱՀՆԱՄԱԿ» ԵՒ «ԶՕՐԱՆԱՄԱԿ»

«Գահնամակ» եւ «Զօրանամակ» անուններով կոչւում են Հայոց վաղ միջնադարից մեզ հասած երկու փաստաթղթերի եզակի գրչագրական պատճէններ:

Դրանցից առաջինը պահպանուել է անյայտ թղթեայ ձեռագրից հանուած եւ պահպանակի վերածուած թերթի վրայ (բոլորագրով, երկու էջերի զոյգ սիւնակներում ամբողջութեամբ), որը 1851 թ. թիֆլիսցի մի գրավաճառի մօտ նկատել ու ձեռք է բերել ժամանակի յայտնի բանասէր, բժիշկ եւ պետական գործիչ Գեւորգ Ախվերդեանը (Եու. Ա. Ախվերդով. տե՛ս նրա՝ Նամակներ, - «Գրական ժառանգութիւն», 3, Եր., 1964, էջ 210-216): Վերջինս, ճիշտ գնահատելով գտածոն ու վերծանելով նրա բնագիրը, ուղարկել է այն Մոսկուա՝ Մկրտիչ Էմինին, որը 1858 թ. իրագործել է «Գահնամակ»-ի առաջին հրատարակութիւնը Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան»՝ իր ռուսերէն թարգմանութեան յաւելուածում: Հետագայում Մ. Էմինը պահպանակն ուղարկել է Վենետիկ՝ Ղեւոնդ Ալիշանին, որը 1890 թ. իր «Այրարատ» աշխատութեան մէջ վերահրատարակել է բնագիրը՝ կից զետեղելով նաեւ ցայսօր Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազարի վանքի մատենադարանում պահպանուող թերթի զոյգ էջերի լուսանկարները (էջ 430-433, տե՛ս նաեւ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908, էջ 249-250): Բնագրի աշխարհաբար թարգմանութիւնը տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանցի, Եր., 1960, էջ 371, ծնթ. 201; Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հտ. 1, Եր., 1981, էջ 613-615 (հատուածի կազմող՝ Ա. Գ. Աբրահամեան):

Երկրորդ փաստաթուղթը՝ «Զօրանամակ»-ը, Յովհաննէս Շահխաթունեանցի կողմից յայտնաբերուել է (եւ 1842 թ. հրատարակուել, տե՛ս Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հտ. Բ, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 1842, էջ 59) Ս. Էջմիածնի կաթողիկոսարանի մատենադարանի մի ձեռագրում, գրչուհի Տիրամայրի ընդօրինակութեամբ, Անանիա Շիրակացու անունը կրող «Ժամանակագրութիւն»-ից (իրականում՝ Փիլոն Տիրակացու) յետոյ: Հետագայում այդ բնագիրն արտատպեցին Ալիշանը (Այրարատ, էջ 424-425) եւ Նիկ. Ադոնցը (էջ 251-252): Ներկայումս փաստաթուղթը պահպանւում է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում: Հրատարակիչների, ինչպէս նաեւ Գր. Խալաթեանցի, Յ. Մանանդեանի, Ս. Տ. Երեմեանի, Գ. Խ. Սարգսեանի քննական անդրադարձերից յետոյ